

ԱԴՐԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՆՅՈՒԹԵՐ

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ  
ԿԱՄՊԱՆԻԱՑԻ  
ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОЛЯДЫ  
Издательство Науки  
СССР

631.5

G-82



ԲՈԳՈՒ—1932

ԱԴՐԿԱՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

30 ԱԼ 2010

34-Ա  
Հա 594

631.5  
G-82

# ՆՅՈՒԹԵՐ

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ  
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ  
ՄԱՍԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ  
Института  
Биологии  
Академии Наук  
СССР

12 JUL 2013

Խմբագիր՝ Ս. Շախունի

16. 954

Տեխ. խմբագիր՝ Կ. Թառլանյան

## ԸՆԿ. ՄՈԼՈՏՈՎԻ ՃԱՌԸ

ԱՐՏԱՍԱՆԱԾ ՈՒԿՐԱՅՆԱՅԻ ԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ՀԱՄԱՊԻԿՐԱՅՆԱԿԱՆ Յ-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ  
1932 թ. ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ

### 1. ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՆԱՎԱԼՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ընկերներ, թույլ տվեք նախ և առաջ համառուկրայնական Յ-րդ կոնֆերանսին կուսակցության կենտրոնի և Միության ժողկոմխորհի բոլշևիկյան ջերմ վողջույնը հաղորդել (ծափանարություններ):

Ներկա կոնֆերանսն ամբողջովին նվիրված եղաղական տնտեսության վերելքի, բերքահավաքի ու հացամթերությունների կամպանիաների տարման հարցերին և զրա հետ կապված մեր կոլխոզների ու ողջոների տնտեսական ամրապնդման գործին: Ուկրայնայի կոմկուսի (Բ) կենտրոնի ուղիղ և վարդելայդ խնդիրները գնելով Ուկրայնայի ամբողջ կուսկազմակերպության ուշադրության կենտրոնում:

Մեր սոցիալիստական շինարարության հիմքն եկազմուկ դեպի յերկրի սոցիալիստական ինդուստրիալիզմիցիան վերցրած ուղղությունը: Դա պահանջում է յուրաքանչյուր բոլշևիկից, յուրաքանչյուր գիտակից բանվորից և գյուղի աշխատավորից ամենամեծ ուշադրությունը դարձնել դեպի մեր արդյունաբերական շինարարությունը, դեպի հաբրիկների ու



56838-66

գործարանների աշխատանքին։ Մենք հաջողությամբ  
առաջ ենք շարժվում յերկրի սոցիալիստական ին-  
դուստրացումը անշեղ իրազործելու ուղիղով, հենց  
նրա համար, վոր այդ խնդիրների վրա են կենտրո-  
նացված կուսակցության ու բանվոր դասակարգի  
բացառիկ չանքերը։

Դրա հետ միասին պետք ե մատնանշել, վոր մի  
քանի դեպքերում ինդուստրացման բնագավառի խըն-  
դիրներն այնքան կանում են մեր կազմակերպու-  
թյունների և նրանց դեկավարների ուշադրությունը,  
վոր գյուղական տնտեսության բարձրացման հարցե-  
րին հարկավոր ուշադրությունը չի դարձվում։ Այդ-  
պիսի դրություն մենք ունեցել ենք վերջին ժամա-  
նակներս նաև այստեղ, Ուկրայնայում, վորտեղ ին-  
դուստրիալ նոր հսկաների հսկայական շինարարու-  
թյուն ե կատարվում, ուր աճում են այնպիսի ար-  
դյունաբերական հսկաներ, վորպես Տրակտորոսարո-  
յը, Դնեպրոստրոյը, Տուբեֆինստրոյը, Կրամնաշտրո-  
յը և ուրիշները։

Սակայն չի կարելի այդպիսի դրությունն ան-  
թույլատրելի չհամարել։ Բոլշևիկները պետք ե հիշեն,  
այն մասին, վոր առանց գյուղական տնտեսության  
բարձրացման չի կարող զարգանալ նաև մեր արդյու-  
նաբերական շինարարությունը, չեն կարող իրակա-  
նացվել սոցիալիստական ինդուստրացման արագ տեմ-  
պերը։

Հիշեցեք թե ինչպիսի դրություն ունեինք 3—4  
տարի առաջ, այսինքն մոտավորապես այն մոմեն-  
տում, յերբ մենք սկսեցինք իրագործել առաջին 5-  
ամյակը։ Հայտնի ե, վոր այն ժամանակ սուր կեր-  
պով այն հարցն եր կանգնել, վոր մանր անհատական  
տնտեսության հետամեացությունը և նրա չափազանց

ցածը ապրանքայնությունն արգելակ եին դառ-  
նում սոցիալիստական շինարարության զարգացման  
համար ամբողջությամբ վերցրած։ Գենց այն ժամա-  
նակ ամբողջ հասակով առաջ ե յեկել գյուղի կապի-  
տալիստական տարրերի դեմ հարձակվելու և գյու-  
ղական տնտեսության վերակառուցման խնդիրը սո-  
ցիալիստական հիմունքով, կոլխոզների և սովխոզնե-  
րի հիման վրա։ Գյուղի միջակային մասսայի մեջ  
տեղի ե ունեցել վորոշ բեկում։ Աշխատավոր գյու-  
ղացիների լայն մասսաները սկսել են անցնել կուլա-  
կության վրա դասակարգի լիկվիդացիայի ու-  
ղին՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա։  
Կոլխոզների արագ աճումը և սովխոզների ծավալուն  
շինարարությունն ապահովել են հացահատիկային տըն-  
տեսության վերելքը և ապրանքայնության բարձրակա-  
նաչափ մեծացումը։ Դրա հետեւանքով ապահովել են  
սոցիալիստական շինարարության տեմպերն՝ ընդուն-  
ված կուսակցության և խորհրդային իշխանության  
կողմից։

Դա չի նշանակում, թե մենք կարող ենք հան-  
գստանալ գյուղական տնտեսության մեջ ձեռք բե-  
րած արդյունքներով։ Ընդհակառակը, մեր առաջ են  
նոր, մեծ խնդիրներ՝ գյուղական տնտեսության վե-  
րելքի վործում։

Անցած տարին մի շաբթ գյուղատնտեսական ռայոն-  
ներում ստեղծել ե վորոշ լրացուցիչ գժվարու-  
թյուններ, 1931 թիվը յեղել ե յերաշտի տարի 5 խո-  
շորագույն ռայոններում։ Միջին ու Ստորին Վոլգա-  
յում Հարավային Ռուբալում, Երևանյան Սիբիրում և  
Կազականում։ Դա պետությունից պահանջել ե բա-  
րականաչափ միջոցներ՝ այդ ռայոններին սերմային  
և մասամբ մնալու հասցնելու համար։

Այդ նպատակի համար պետությունը վերջին ամիսներս հատկացրել է 107 միլիոն փութ հացահատիկ, Շնորհիվ պետական այդ ողնությանը հիշված գյուղատնտեսական ռայոնները կարողացել են հիմնականում կատարել ցանքսային կամպանիան։ Սակայն այդ ողնությունը հասցնելու անհրաժեշտությունը չեր կարող չազդել պետական հացահատիկային ռեսուրսների վրա, ամբողջությամբ վերցրած։

Միայն շնորհիվ այն բանի, վոր մեր գյուղական տնտեսության մեջ կոլխոզներն ու սովխոզներն՝ իրենց բարձր առրանքայնությամբ բռնել են տիրապետող դիրք, հնարավոր և յեղել պետության այդ ողնությունն անբերի ռայոններին։ Միայն շնորհիվ դրան, չնայած մի շարք ռայոններում անցյալ տարվա անբերի ռությանը մենք կարողացել ենք չիջեցնել ցանքսային տարածություններն այս տարի։ Դա անկարելի կլիներ, յեթե մեր գյուղական տնտեսությունում տիրապետող տեղը պատկաներ անհատական տնտեսություններին։ 1931 թվի յերաշտի հետեւ վանքների գեմ մղած պայքարի որինակով տեսանելի ե այն ամբողջ տարբերությունը, վոր կա ներկա դրության, — յերբ գյուղական տնտեսության մեջ վճռական տեղը բռնել են կոլխոզներն ու սովխոզները, — և այն շրջանի միջև, յերբ գյուղական տնտեսությունում տիրապետում եր անհատական գյուղական տնտեսությունը (որինակ, 1921 թվին, յերբ յերաշտը լրջորեն կպել եր նաև Ուկրայնային)։

Ներկա տարվա բերքի հեռանկարն ավելի բարենպատ ե, քան թե անցյալ տարի։

Առայժմ կարելի ե խոսել միայն ընթացիկ տարվա բերքի նախնական նշումների մասին։ Եերքի վերջնական սպառումները կվորոշվեն 2-3 շաբթից հետո։

Վորքան կարելի ե դատել նախնական տվյալների հիման վրա, ապա մենք կարող ենք հուսալ ավելի բերք հավաքելու, քան թե անցյալ տարի։ Մոտ որեւըս լրագրում տպված ընկ. Ոսինսկու գրույցում մատնանշվում ե, վոր նախնական տվյալներով այս տարի կարելի ե անցյալ տարվանից 500 միլ. փութ ավելի բերք ստանալ։ Այդպիսով բերքի սպասելիքները վատ չեն։

Սակայն, սա վոչ մի չափով չպիտի փոքրացնի մեր առաջ կանգնած խնդիրները՝ գյուղական տնտեսության ասպարիզում։ Մենք պետք ե շատ աշխատենք և հաղթահարենք հսկայական դժվարությունները, վորպեսզի անցյալ տարվանից ավելի բերք հավաքենք և ապահովենք գյուղական տնտեսության, ամենից առաջ հացահատիկային տնտեսության հետագա վերելքը։

## 2. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ ՍՐՎԽՈԶՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ցանքսային կամպանիայի արդյունքները վկայում են Խորհրդային Միությունում կոլխոզների և սովխոզների հսկայական հաղթանակի մասին։ Խորհրդային Միությունում գարնանացան տարածության չորս հինգերորդականից ավելին ցանել են կոլխոզներն ու սովխոզները։ Այդպիսի դյուքյուն մենք յերեք դեռ չենք ունեցել։ Խորհրդային Միությունը վերջնականապես ամրապնդվել ե գյուղական տնտեսության զարգացման սոցիալիստական ուղղու վրա։ Մովխոզների և կոլխոզների հաղթանակը մեր դասակարգային։ թշնամիների և նրանց քաղաքական ազեն-

տուրայի – եսերների, մենչևիկների, տրոցկիստների և  
աջ ոպորտունիստների – հաշիվներն ամբողջապես ջարդ  
ու փշուր ե արել: Հակառակ նրանց հաշիվների  
և հակառակ հականեղափոխական կուլակության դի-  
մագրության, զյուղը հաղթականորեն առցիալիզմի  
ուղիով առաջ ե ընթանում:

Դրա փայլուն որինակներից մեկն Ուկրայնան և  
հանդիսանում, վոր գյուղական տնտեսության սոցի-  
ալիստական վերակառուցման գործում առաջին շար-  
քերումն ե ընթանում: Ուկրայնայում վերջին տա-  
րիներս սովորողային շինարարությունն արագությամբ  
ծավալվել ե, կոլխոզներում միացված ե գյուղա-  
ցիական տնտեսությունների արդեն 70 տոկոսը:  
Այս տարգա շանքսային տարածության 81%-ը  
սովորողների և կոլխոզների ցանքսերն են կազմում:

Թե գյուղական տնտեսության զարգացման մեջ  
վորքան են մեծ կոլխոզների հնարավորությունները,  
այդ յերեվում ե Ուկրայնայում մի շարք տեխնիկա-  
կան կուլտուրաների ցանքսերի աճման որինակից:  
Այսպես, վերջին չորս տարիների ընթացքում ճակա-  
դեղի ցանքսերի տարածություններն յերկրում ան-  
գամ աճել են: Վուշի ցանքսերի տարածությունը վեր-  
ջին յերեք տարգա ընթացքում աճել ե մեկ ու կես  
անգամ: Ընդամենը յերկու տարի առաջ են սկսել  
Ուկրայնայում բամբակ ցանքը: Այս տարի բամբա-  
կի ցանքսերի տարածությունը Ուկրայնայում հաս-  
նում է մինչև 200 հազար հեկտարի, դա մեկ յեր-  
բորդական մասն ե կազմում բամբակային ցանքսե-  
րի այն տարածության, վորը մինչև հեղափոխու-  
թյունն ունեցել ե Թուրքեստանը: Ուկրայնայում  
տեխնիկական կուլտուրաների աճման այս փաստերը  
վկայում են այն մասին, վոր կոլխոզների և սով-

խոզների վրա հենվելով՝ մենք կարող ենք և պետք  
ե ապահովենք առաջիկայում գյուղատնտեսական ար-  
տադրության վերելքի վճռական հաջողությունները:

Այսոււամենայնիվ մենք այժմ ստիպված ենք հաշ-  
վի առնել և այն փաստը, վոր Ուկրայնայում այս  
տարի ցանքսը թերակատարվել է:

Ցանքսային պլանն այստեղ չի կատարվել, իսկ  
մի շարք ուայոններում, հացամթերումների ժամանակ  
սլավների հետևանքով, պարենավորման ծանր դրու-  
թյունն ե ստեղծվել: Այդ ուայոնների կոլխոզներից  
շատերի համար այդ դրությունը գեռ վերացված չի:

Դա վկայում է Ուկրայնայի մեր կազմակերպու-  
թյունների խոշոր թերությունների մասին գյու-  
ղական տնտեսության վերելքի ղեկավարության գոր-  
ծում, առանձնապես կոլխոզների ղեկավարության  
գործում: Ինքնաքննադատության կարգով մենք պետք  
ե խոստովանվենք, վոր այդ խնդիրներն Ուկրայնա-  
յի բոլշևիկները վերջին ժամանակաշրջանում չեն կա-  
րողացել կարդավորվել: Մենք տասնյակ հազարավոր  
կոլխոզներ ենք կազմակերպել, բայց չենք կարողա-  
ցել կոլխոզային շինարարությունը պատշաճ գործ-  
նական ղեկավարությամբ ապահովել, չենք կարողա-  
ցել գործնական ղեկավարությամբ ապահովել գյու-  
ղատնտեսական այնպիսի հիմնարկան կամպանիաները,  
ինչպիսիքն են բերքահավաքի և հացամթերումների  
կամպանիաները:

Մենք գիտենք, թե ինչպիսի դժվարությունների  
ենք հանդիպում արդյունաբերության մեջ, յերբ գոր-  
ծը վերաբերվում է նոր խոշոր ձեռնարկների աշխա-  
տանքին: Բոլորին հայանի ե այն որինակը, թե ինչ-  
պես հաջողությամբ Ստալինգրադում տրակտորային  
խոշորագույն գործարանը կառուցելով, մենք ստիպ-

ված եինք յերկարատե պայքար մղելու այդ արտա-  
դրությանը տիրապետելու, տրակտոր շնելու տեխ-  
նիկային տիրապետելու համար։ Մենք վերջին տա-  
րիներս մի հատ նոր հսկա գործարան չե, վոր կա-  
ռուցել ենք, բայց դուք դիտեք, վոր այժմ ել այդ  
գործարաններում արտադրություն կազմակերպումը  
և նրանց ուժի լիակատար ոգտագործումն ապահո-  
վելը սլակաս դժվարություններով չի առաջ ընթա-  
նում։ Հայտնի են նաև, թե ինչպիսի մեծ դժվարու-  
թյունների ենք հանդիպել Դոնի քարածխային արդյու-  
նաբերությունը մեխանիզացիայի յենթարկելը գլուխ  
բերելիս։

Քանի անդամ ավելի դժվար ե մեր խնդիրը գյու-  
ղական տնտեսության մեջ տասնյակ և հարյուր հա-  
զարավոր կոլխոզների ղեկավարության նկատմամբ,  
վորոնք կազմակերպվել են վերջին տարիներս։ Ուկ-  
րայնայի որինակով այդ բանն արտահայտվել և ա-  
ռանձին ուժով։

Այսուղի, Ուկրայնայում, բավականաչափ առիթ-  
ներ կան նրա համար, վոր կուսկազմակերպություն-  
ների և ամբողջ կենտրոնի ուշադրությունը կլանվի  
արդյունաբերության ասպարիզում այնպիսի հսկայա-  
յական խնդիրներով, ինչպիսիք են Դոնբասը, Դնե-  
պրոստրոյը և այլն։ Զի կարելի չընդունել սոցիա-  
լիստական շինարարության համար այդ արդյունա-  
բերական խնդիրների հսկայական կարևորությունը։  
Սակայն Խորհրդային Միության գյուղական տնտե-  
սության մեջ Ուկրայնան այնպիսի աշխի ընկնող  
տեղ ե գրավում, վոր Ուկրայնայում ղեպի գյուղա-  
կան անտեսության հարցերը յեղած ուշադրության  
թուլացումը — ամենաբացասական հետևանքների և  
հանգում։ Այսուղի յելույթ ունեցած ընկերները բա-

վականին որինակներ բերին, թե վերջին ժամանա-  
կաշրջանում գյուղական տնտեսության գործնական  
ղեկավարության թերությունները վորքան մեծ են  
յեղել։ Հետևանքն այն է յեղել, վոր ցանքսային կամ-  
պանիան անբավարար ե անց կացրվել և բազմաթիվ  
սխալներ են տեղի ունեցել հացամթերութների ժա-  
մանակ։

Զի կարելի չնշել, վոր ցանքսային կամպանիայի  
սկզբում ղեկավարող որգաններն առանձին ուայոննե-  
րում այդ կամպանիայի հիմնական դժվարություն-  
ների ճիշտ հաշվառում չեն ունեցել, մասնավորապես  
Վիննիցկու և Կիևի շրջաններում։ Միայն մեծ ուշա-  
ցումով ե այդ ուայոնների վրա հարկավոր ուշադրու-  
թյունը դարձվել։

Հացամթերութների կամպանիայի կազմակերպման  
անբավարար լինելը, ի միջի այլոց արտահայտվել ե  
նրանով, վոր հացամթերութների պլանը կատարած  
ուայոններն ու կոլխոզները հաճախ նոր առաջադրու-  
թյուններ են ստացել, յերբեմն այդ բանը տեղի ե  
ունեցել 3—4 անգամ։ Հաճախ կոլխոզներում գտնը-  
վող կուլակության ազենտները մեր ստորին կազ-  
մակերպությունների կողմից բոլցնիկյան հականար-  
դածի չեն հանդիպել, այն կազմակերպությունների  
կողմից, վորոնք գլուխվել են աջ ուղղացներունիստական  
պրակտիկայի հունը։ Յերբեմն, ինչպես որինակ Դրա-  
բովսկու ուայոնում, բանը հասել է մինչև կուսակ-  
ցական գծի մասսայական ծոռութներին և կոլխոզնիկ-  
ների ու մենատնտես գյուղացիների նկատմամբ ուղ-  
ղակի կուլակային պրովոկացիօն ծաղրանքներին։  
Մյուս կողմից, հացամթերութների ժամանակաշրջա-  
նում «ձախլիկ» ծոռութները բավականաչափ տարած-  
ված են յեղել։ ըստ վորում նրանց դեմ՝ ձեռք առ-

նված միջոցները հաճախ խիստ ուշացած են յեղել։  
Առանձնապես վատ ցուցանիշ ե հանդիսանում  
այն հանգամանքը, վոր մի քանի զեպքերում կոլխոզ-  
ների և ընդհանրապես գյուղական անտեսության բա-  
ցասական մոմենտների մասին տված ազգանշանները  
ուշ են հասել Ուկրայնալի ղեկավար որգաններին։  
Այդ գործում վորոշ նշանակություն ե ունեցել այն  
հանգամանքը, վոր Ուկրայնալի ղեկավար որգանները  
մինչև վերջերս գործ են ունեցել 400 ից ավելի ռայոն-  
ների հետ։ Պետք ե խոստովանել, վոր մինույն ժա-  
մանակ ռայոնների պրակտիկ ղեկավարությունն ապա-  
հոված չի յեղել։ Դրա համար Ուկրայնայում շրջան-  
ները ստեղծելը դրական մեծ նշանակություն ունի։  
Կոնֆերանսում յեղած վիճաբանություններից յերե-  
վում ե, վոր շրջաններ կազմակերպելու շնորհիվ  
մենք ռայոններն ու կոլխոզները ղեկավարելուն մո-  
տեցել ենք։

Կոնֆերենսում յեղած վիճաբանությունները, ա-  
ռանձնապես ռայոնական գործիչների յելույթները,  
մենույն ժամանակ ցույց են տալիս, վոր դեռ բավա-  
կանաչսկ չի գիտակցվում Ուկրայնալի կազմակեր-  
պության՝ գյուղում տարվող աշխատանքի վճռական  
բարելավման անհրաժեշտությունը։ Տեղական գոր-  
ծիչների յելույթներում շատ քիչ ուշադրություն դար-  
ձրվեց նրանց աշխատանքի թերությունների քննադա-  
տությանը։ Բոլորովին քիչ խոսվեց այն մասին, թե  
ինչ ե արվում բերքհավաքի կամպանիան կազմակեր-  
պելու համար, կոլխոզներում բրիգադներ կազմակեր-  
պելու գործն ինչպես ե ընթանում, ինչպես ծավալ-  
վում պարփառը բերքահավաքի ժամանակ յեղած կո-  
րուստների դեմ, ինչ ե արվում անասնապահություն-  
բարձրացնելու համար և այն։ Մինչդեռ պիտի ըն-

դունել գյուղական անտեսության նկատմամբ Ուկ-  
րայնալի ռայոնական կուսկազմակերպություններից  
շատերի և Ուկրայնալի կոմիտեի (բ) կենտկոմի  
պրակտիկ ղեկավարության անբավարությունը և  
դրանից բոլշեկույն յեզրակացություններ անել գյու-  
ղի ամբողջ աշխատանքը վճռականորեն վերակառու-  
ցելու և կոլխոզալին շինարարության ղեկավարու-  
թյունը լրջորեն բարեկավելու մասին։

Այժմ փորձեր կան Ուկրայնալի գյուղական տըն-  
տեսության ասպարեզում տարված աշխատանքի թե-  
րությունները սվաղելու, Ուկրայնայում վերջին հա-  
ցամթերությունների կամպանիայի բացասական փաստերը  
բարգելով «արտաքին» պատճառների, հացամթերում-  
ների պլանի չափի վրա և այն։ Անհրաժեշտ ե հակա-  
տար տալ։

Հարկավոր ե ինքն իրեն հաշիվ տալ, թե վերջին  
ժամանակաշրջանի մեր հացամթերումների աշխա-  
տանքի գլխավոր թերություններին ինչում են կայա-  
ցել։ Առանց այդ հարցին պարզ պատասխան տալու,  
չի կարելի հերթական հացամթերությունների կամպանի-  
այի նկատմամբ քաղաքական և գործնական ճիշտ  
յեզրակացություններ հանել։

Ինչպես ե պատասխանում այդ հարցերին մեր  
կուսակցությունը։ Դառնում եմ ՎԵԿՍ.ՊԵ-ի (բ)  
կենտկոմի հացամթերությունների կամպանիայի մասին  
կայացրած վերջին վորոշմանը։ Այդ փորոշումն ըն-  
դունվել ե այդ հարցի վերաբերյալ ընկ։ Ստալինի  
կուսակցությունների համապատասխան։ Ընկ։ Ստա-  
լինի ցուցմունքները կենտկոմի վորոշման հիմքում  
են դրված։

Նրանում պաված ե հետեւյալը.

«Անցյալ տարվա մեր հացամթերումների աշխատանքի զլխավոր սխալը, առանձնապես Ուկրայնայում և Ուրալում, կայանում ե նրանում, փոր հացամթերումների պլանը տրվել ե ռայոններին և կոլխոզներին և անց ե կացվել լոչ թե կազմակերպված ձեռվով, այլ տարրերայնորեն՝ ըստ հավասարանքի «սկզբունքի», անց ե կացվել մեխանիկորեն, առանց հաշվի առնելու դրությունը յուրաքանչյուր առանձին ռայոննում, առանց հաշվի առնելու դրությունը յուրաքանչյուր առանձին կոլխոզում»:

Հետևաբար գլխավոր խնդիրը կայանում ե նրանում, թե ինչպես բաժինը հացամթերումների պլանը, ինչպես անց կացնել այդ պլանը: Խնդիրը նրանում ե, փոր վճռականորեն վերջ տալ կոլխոզների հետ տարրվող աշխատանքի տարրերայնությանը, վերջ տալ հավասարանքին և ռայոններին ու կոլխոզներին մեխանիկորեն մոտենալուն: Դրահամար մեզ անհրաժեշտ ե ռայոններում և կոլխոզներում տիրող իսկական դրությունն իմանալ, և հաշվի առնել յուրաքանչյուր ռայոնը և կոլխոզի առանձնահատկությունները, կազմակերպված կերպով անցկացնել հացամթերումների հերթական կամպանիան: Այս ամենը պահանջում ե փոչ միայն հենց հացամթերումների աշխատանքի լավ կազմակերպում, այլ լավ տեղյակ լինել գյուղական տնտեսությանը, նրա առանձնահատկություններին՝ ըստ ռայոնների և կոլխոզների, ճիշտ մոտեցում ունենալ փոչ միայն հացամթերումների պլանավորմանը, այլ և կոլխոզային շինարարության ամբողջ գեկավարության մեջ:

Պետք ե խոստափանել, փոր անցյալ տարվա հացամթերումների ժամանակ ռայոններին և կոլխոզներին հավասարանքամեխանիկան մոտեցումը մի

շարք ռայոններում և շատ կոլխոզներում չափազանց բացասական հետեւանքներ ե տվել: Պիտի այդ անթույլատրելի պրակտիկայից վճռականապես հրաժարվել, վերակառուցելով մեր աշխատանքը կուսակցության պահանջների համապատասխան:

Այդ մասին առանձնապես պետք ե այժմ հիշեցնել Ուկրայնայի գործիչներին, նոր բերքի՝ սկսվող հացամթերումների կապակցությամբ: Առավել ևս անհրաժեշտ ե այդ անել, վորովհետև անցյալ տարվա հացամթերումների աշխատանքի սխախները կուսկազմակերպության վորոշ խավերում գեմորիլիզացիոն տրամադրությունների վտանգ են ստեղծում:

Զի կարելի աչքերը փակել, փոր անցյալ տարվա հացամթերումների աշխատանքի սխախների և դրա հետևանքով մի քանի ռայոններու և կոլխոզներում ստեղծված ծանր կացությունն առանձին ընկերների գրգում են միանգասայն սխալ յեզրակացությունների հանգելու: Այժմ փորձեր են անում մատնանշված փաստերը բացատղելու անցյալ տարվա հացամթերումների պլանի չափերով և դրանից յեզրակացություն հանել այս տարվա հացամթերումների համար սահմանված պլանը վերանայելու անհրաժեշտության մասին: Մինչդեռ հայտնի ե, յեխնելով այս տարվա առանձնահատկություններից Ուկրայնալի և ուրիշ ռայոնների համար հացամթերումների պլանը բավականաչափ պակասացված ե անցյալ տարվա համեմատությամբ:

Այս ամենը բոլշևիկներից պահանջում ե պարզ պատասխան, ինչպես անցյալ տարվա հացամթերումների արդյունքների գնահատման, այսպես և ընթացիկ տարվա հացամթերումների խնդիրների մասին:

Անցյալ տարվա հացամթերումների աշխատանքի

հետևանքների հանցանքը բարդել հացամթերումների պլանի չափերի վրա, նշանակում ե վերջին ժամանակաշրջանի հացամթերումների սխալների ամբողջ հարցը սպազել: Դրա հետևանքով մենք վոչ միայն կարողություն չենք ունենա բոլցիներեն քննադատելու այդ սխալները, վորի անհրաժեշտությունն ե մատնանշում կուսակցությունն, այլ մեր պաշտպանության տակ կվերցնենք անցյալ տարվա հացամթերման աշխատանքի թերությունները: Այդպիսի դրությունը միանդամայն անհանդուրժելի ե բոլցիների համար:

Մյուս կողմից՝ այս տարվա հացամթերման պլանը կծկելու ուղին անցնելը՝ նշանակում ե սոցիալիստական շինարարության դժվարությունների առաջ անձնատուր լինելու ուղին անցնել, նշանակում ե գեմբիլիզացիայի յենթարկել մեր կազմակերպությունները, նշանակում ե բոլցիների կըծկման ուղին անցնել: Խոսք չկա, վոր այդ ուղին իր հիմունքով անընդունելի ե բոլցիների համար:

Բոլցիների համար խնդիրը բոլորովին ուրիշ կերպ ե դրված: Խնդիրը նրանումն ե կայանում, վոր հասկանանք անցյալ ժամանակաշրջանի մեր աշխատանքում յեղած թերություններն ու սխալները և կուսակազմակերպությունն ու աշխատավոր մասսաները մոբիլիզացիայի յենթարկենք՝ հաղթահարելու բոլոր թերություններն ու սխալները, ամեն բան անելով՝ կուսակցության դրած խնդիրների իրականացումը ապահովելու համար: Սոցիալիստական ջինարարության դժվարության առաջ անձնատուր լինելու ուղին - աջ ոպորտունիստների և «ձախերի» ուղին ե, վորոնք ոպորտունիզմը «ձախ» բառերով են վարագուրում: Բոլցիների ուղին՝ կուսակցության դրած

խնդիրներն իրականացնելու համար մասսաները մո-  
բիլիզացիայի յենթարկելու ուղին ե:  
Յիաժամանակ պարզ ե, վոր մեր աշխատանքը  
գյուղում, մամավորապես Ուկրայնայում չվերակա-  
ռուցվի համապատասխան կոլխոզների ղեկավարու-  
թյան վճռական բարելավման խնդիրների, համապա-  
տասխան առանձին ույունների և կոլխոզների առանձ-  
նահատկությունների խսկական հաշվեառման խնդիր-  
ների, ակա կուսակցության դրած խնդիրները չեն  
իրականանա: Մյուս կողմից բոլոր հիմքերն ունենք  
հուսալու, վոր գյուղում մեր աշխատանքի պատշաճ  
վերակառուցումը վոչ միայն կարող ե, այլ պետք ե  
այդ խնդիրների իրականացումն ապահովի:

83 Բանը միայն հացամթերումները ձատիվ պլանավո-  
րելու մեջ չի կայանում: Բանը նրանումն ե, վոր բոլ-  
ցիների աշխատանք ապահովենք բերքահավաքի կամ-  
պանիան տանելու, հացահատիկ պահելը կազմակեր-  
պելու, կոլխոզների աշխատանքը դնելու, կոլխո-  
զային բրիգադներ կառուցելու գործում և այս: Մի-  
այն այդ դեպքում մենք կլուծենք դրված խնդիրը:

Խորհրդային Միության ժողովադիրն ու մեր կու-  
սակցության կենտկոմը հենց նոր, բերքահավաքի կամ-  
պանիայի մասին հատուկ ցուցմունք են նրատարա-  
կել: Այդ վորոշման մեջ մատնանշվում ե, վոր հուն-  
ձի ժամանակ տեղի ունեցող կորուստների դեմ պայ-  
քարը պետք ե կենտրոնական տեղ գրավի: Հիրավի,  
յերբ բոլորին հայտնի ֆաստեր գոյություն ունին,  
վոր տամայակ, նույնիսկ հարլուրավոր միլիոն փութ-  
հացահատիկ ե կորչում բերքահավաքի ժամանակ, այդ  
կորուստների դեմ պայքար մղեն առաջնակարգ նշա-  
նակություն ունի ամբողջ գյուղատնտեսական տար-  
վա հանրագումարների համար: Ենթահամարքի ժամա-

նակ ու նրանից հետո հայահատիկը ցանուցիր ամելու և գողանալու դեմ պայքար մղելու հարցը մեծ նշանակություն ունի հացամթերման և ցանքսային կամպանիայի համար։ Կուսակցությունն առանձնապես մատնանշում է, վոր կոլխոզում մեր աշխատանքըն այսպես պետք է դրվի, վոր այն կոլխոզները, վորոնք ավելի լավ են կազմակերպել իրանց աշխատանքը, վորոնք կարողացել են լավագույն բերքատվության համել և ավելի լավ են տարել հունձը, վոր այդ կոլխոզներն ել իրանց տրամադրության տակ, սեփական գործադրության համար ավելի մեծ քանակությամբ հաց և այլ գյուղատնտեսական մըթերքներ ունենան։ Յեկ կոլխոզային բրիգադների ու առանձին կոլխոզնիկների աշխատանքի գնահատության վերաբերմամբ ևս պետք է գործով կատարվի ՎեկՊԵ-ի (բ) կենտկոմի և Խորհրդային Միության ժողովի խորհի ցուցմունքն այն մասին, թե նայած բրիգադների և առանձին կոլխոզնիկների աշխատանքի վորակի՝ աշխատորերի գնահատականը պետք է փոխվի, բարձրանալով կամ իջնելով։ Այդ բոլորը նախապայմաններ են ստեղծում կոլխոզների լավագույն աշխատանքի, նրանց աշխատանքի արտադրողականությունը կությունների ու առանձին կոլխոզնիկների արամագրության տակ անցնող մթերք չերի չափի ավելացման համար։ Այդ բոլորն անպայման ննարավորություն և ստեղծում, վոր կոլխոզները կատարեն կառավարության առաջ իրանց վերցրած պարտականությունները և դրա հետ միասին՝ կոլխոզնիկների նյութական բարեկեցությունը բարձրացնելու։

Պետական առաջարությունների կատարման, կոլխոզների ամրապնդման և կոլխոզնիկների բարեկե-

ցության բարձրացման ապահովումը նրանից ե կախված, թե մենք ինչ չափով կկարողանանք այս տարի բերքահավաքը կազմակերպել և տեխնիկական կուլտուրանների քաղաքացի գործը հարթել, ուժեղացնել պայքարը կորուստների դեմ, թույլ չտալ հացահատիկը վասնել և գողանալ, բարեկավել կոլխոզներում աշխատանքի կազմակերպումը, համախմբել կոլխոզային ակտիվը և բացարել կոլխոզնիկներին իրենց առաջ կանգնած խնդիրները։ Վոչ մի զիջում և տատանում կուսակցության և խորհրդային իշխանության ընդունած խնդիրների իրականացման հարցում։ Լարենք մեր բոլոր ուժերը՝ այդ խնդիրներն իրագործելու, հականարդաված տալու կուլակին և կապիտուլյանտներին, ովքեր ել դրանք լինին, — ոպորտունիստներ, թե արոցկիստական տիպի «ձախեր»։

### 3. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԸԻ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Անցյալ տարվա համեմատությամբ մենք այս տարի բավականին առանձնահատկություններ ունենք աշխատանքի համար գյուղում։

Հստ այնմ հատուկ ուշագրության և արժանի կուսակցության և կառավարության հայտնի վորոշումը կոլխոզների առեվլսրի ծավալման մասին։

Կոլխոզների և աշխատավոր գյուղացիների համար այս տարի հացամթերումների պլանը պակասացնելով մենք ընդունել ենք հացամթերումների պլանի ավելցումը սովորողների համար և առանձնապես մատնացույց ենք արել այն, վոր հացամթերումներն ավարելուց հետո պետք է անարգել ծավալվի հացի կոլ-

Խողային առետուրը։ Այդ վորոշումը պետք է ճշտիվ կատարվի։

Նա պահանջում է, վոր կոլխոզներն առաջին տեղ և մյուս խնդիրներից առաջ գնեն հացամթերումների պլանի ու ցանքսի համար սերմի հավաքման կատարելու գործը։ Ապա նա մատնանշում է, վոր այդ առաջադրությունները կատարելուց հետո, կոլխոզները և կոլխոզնիկները, նույնպես և աշխատավոր զյուղացիներ-մենատեսները կարող են հացի անարգել առետուր անել։ Բայց դրա հետ միասին կուսակցության և կառավարության վորոշման մեջ հաստատավես մատնանշված ե այն, վոր պիտի վճռական պայքար մզվի սպեկուլյանտների ու ձեռքե-ձեռք գնողների դեմ, վորոնք կաշխատեն շահել կոլխոզնիկների և աշխատավոր մենատես զյուղացիների հաշվին։ Զի կարող կասկած լինել այն բանում, վոր կուլակը, ըստեկույանտը և ձեռքե-ձեռք գնողը կձգտեն հացի առեսուրը շուր տալ իրենց ոգտին, վոր նրանք աշխատեն մի ձեզք գտնել հացի սպեկուլյատիվ առեվտուր զարգացնելու համար։ Զի կարելի նաև հաշվի չառնել այն, վոր կոլխոզային առեսուրի ծավալումը կարող ե վորոշ տատանումներ մտցնել կոլխոզնիկների շարքերի մեջ, վոր կուլակի ազդեցության տակ կոլխոզնիկների անկայուն տարրերը կարող են ձգտել դեպի կոլխոզից դուրս գալը։

Սակայն վոչ մի կասկած չի կարող լինել այն բանում, վոր կոլխոզային առեսուրի ծավալման մասին կուսակցության և խորհրդացին իշխանության վորոշումը կարող ե և պիտի մեծ դեր խաղա կոլխոզների ամրապնդման գործում, կոլխոզնիկների շարքերը համախմբելու գործում։ Այդ վորոշումը մեծացնում է կոլխոզնիկի շահագրգռվածությունը՝ բերքի ար-

դյունքների մեջ, հետևաբար և բերքահավաքի կամպանիան կազմակերպված տանելու, կորուստների դեմ պայքարելու մեջ և այլն։ Հետևաբար, յեթե մենք իրոք ապահովենք գեպի կոլխոզներն ու կոլխոզնիկներն յեղած մեխանիկական-հավասարանքային մոտեցման վերացումը, ապա մենք նոր նախադրյալներ կունենանք կոլխոզների աշխատանքում առանձին կոլխոզնիկների շահագրգռվածությունը մեծացնելու համար։ Կոլխոզային առեսուրի ծավալումը վոչ միայն չի հակասում կոլխոզների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման խնդրին, այլև կարող ե ու շատ բանով պետք ե ոգնի այդ գործին։ Կոլխոզային առեվտուրի ծավալումը վոչ միայն չի բթացնում պայքարը կուլակի ու սպեկուլյանտի դեմ, այլ, ընդհակառակը, տվյալ պայմաններում նրան դարձնում ե ավելի բազմակողմանի ու վճռական։

Բոլշեկիկները գործը պիտի դնեն այնպես, վորպեսզի հացամթերումները վերջացնելուց հետո կոլխոզային առեսուրի ծավալումը բարձրացնի կոլխոզների ու առանձին կոլխոզնիկների շահագրգռվածությունը դեպի կոլխոզային տնտեսության ամրապնդումը, դեպի կոլխոզային տնտեսության ապրանքայինության մեծացումը, դեպի հացամթերումների պետական պլանի, կոլխոզային պլանի կատարման և սերմային ֆոնդ կառուցելու արագացումը։ Կոլխոզային առեսուրի ծավալումը պետք ե մեծացնի կոլխոզնիկի շահագրգռվածությունը գեպի բերքատվությունը բարձրացնելու գործը, գեպի բերքահավաքի լավագույն կազմակերպումը, գեպի կորուստների դեմ պայքարը, և գեպի կոլխոզներում աշխատանքի կազմակերպման ամբողջ գործը։ Մյուս կողմից՝ հացի կոլխոզային առեսուրը պետք ե լրացուցիչ մատակարարման աղբյուր

հանդիսանա քաղաքների բանվորների ու ծառայողների մատակարարման համար: Այդ ամենի մեջ վըսական նշանակություն կունենա մեր աշխատանքը կոլխոզներում, մեր կարողությունը կոլխոզնիկներին համախմբելու՝ կոլխոզային առևտության ծավալման մասին կուսակցության ու կառավարության կայացրած վորոշումը բոլշևիկորեն կիրառելու շաւրջը:

Արժե կանգ առնել նեղափոխական որինականության ամրապնդման մասին վերջերս կայացրած վորոշման վրա:

Կարիք չկա ապացուցելու, թե մեզ մոտ դեռևս պրակտիկայում հեղափոխական որինականության քիչ ծոռւմներ կան, մանավանդ գյուղում: Պայքարը հեղափոխական որինականության ամրապնդման համար անհրաժեշտ է: Սակայն տվյալ դեպքում ևս դասակարգային թշնամական տարրերը փորձեր կանեն իրենց տեսակետից մեկնարանելու հեղափոխական որինականության կիրառումը, փորձեր կինեն հեղափոխական որինանականության ամրապնդելու մասին կուսակցության և խորհրդային իշխանության պահանջները մեկնաբանելու, իբր թե պայքարը զասակարգային - թշնամական տարրերի դեմ մեղմանում եւ բոլցիկիների և խորհրդային իշխանության բոլոր աղնիվ կողմանակիցների խնդիրն եւ ապահովել հեղափոխական որինականության կիրառումն աշխատավորների ոգտին, բանվորների, կոլխոզնիկների և մենասնտես աշխատավոր գյուղացիների ոգտին: Առանձնապես գա կարեւոր ե գյուղում կոլխոզնիկների վերաբերմամբ, վորովճետե պայքարը կոլխոզներում ընարականությունը խախտելու դեմ, պայքարը կոլխոզային գույքի վերաբերմամբ այս կամ այն պաշտոնատար անձանց կողմից կամայական կարգադրու-

թյուններ անելու դեմ և առհասարակ պայքարը կոլխոզների վերաբերմամբ հրամանատարելու անթույլատրելի ձևերի դեմ՝ պետք ե կարևորագույն նշանակություն ունենա կոլխոզներն ամրապնդելու և կուլակի հակակոլխոզային աշխատանքն արմատախիլ անելու համար Հեղափոխական որինականության ամրապնդման հիման վրա տարրվող պայքարը՝ տեղական որգանների պրակտիկայում յեղած ամեն տեսակի ծոռւմների դեմ, ինչպիսի «Ճախ»՝ ֆրազների տակ ել թագցնվելու լինեն այդ ծոռւմները, — պետք ե ուժեղացնվի և հենց դրանով պետք ե խորհրդային իշխանության որգանների հեղինակությունը բարձրացվի կոլխոզային մասսայի աչքում, դյուզի չքավորամիջակային մասսայի աչքում և քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորների աչքում:

Մեր գյուղական տնտեսության վերելքի համար ահազին նշանակություն պիտի ունենան այն միջոցառումները, վոր այժմ կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն իրագործում են գյուղին արդյունաբերական ապրանքներ վատակարարելու վերաբերմամբ:

Դեռևս կուսակցության 16-րդ համագումարն ամենայն վճռականությամբ մատնանշել ե, թե անհրաժեշտ ե ուժեղ ուշագրություն դարձնել թեթև արդյունաբերության վերելքին և քաղաքի ու գյուղի համար լայն գործածության առարկաների արտադրությունը ծավալելուն: Այդ գորոշման կատարումը մինչև վերջին ժամանակներս դժվար եր առաջ շարժվում: Այն ինչ, աշխատավորների պահանջների աճումը պահանջում ե վճռականորեն բարելավել այդ գործը: Առանձնապես գա անհրաժեշտ ե կոլխոզային առևտության ծավալման հետ կապված, վորի հանդեպ պետք

Ե շարժել արդյունաբերական ապրանքների մեծացրած հոսանք:

Դրա համապատասխան՝ կուսակցությունը և կառավարությունն ուժեղացրած ուշադրություն են դարձնում լայն գործածության առարկաների արտադրության ծավալմանը, մանավանդ գյուղին արդյունաբերական ապրանքներ մատակարարելու գործի մեծացմանը։ Դա արդեն իր արտացոլումն եղանում պրակտիկայում։

Ներկա յեռամայակում (հուլիս—ոգոստոս—սեպտեմբեր) գյուղին արդյունաբերական ապրանքներ մատակարարելու գործը բավականաչափ լավանում է։ Անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ գյուղ ուղարկվող արդյունաբերական ապրանքների քանակը բավականաչափ մեծանում է։ Բավական ե մատնանշել, վոր այս տարվա յերրորդ յեռամայակում գյուղ ուղարկվող արդյունապրանքների (այսպես կոչվող պլանավորվող գրուպպայի ապրանքներ) քանակն ավելի քան յերկու անշան մեծացված ե՝ անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ։

Դյուղին արդյունապրանքներ մատակարարելու այդ միջոցառումներն ստեղծում են ավելի նպաստավոր պայմաններ գյուղում տարվող մեր ամբողջ աշխատանքի համար, և ամենից առաջ մեր կոլիզոնների ամրապնդման և հիմնական գյուղատնտեսական առաջադրությունները նրանց կողմից կատարելու համար։ Սակայն այդ գործում ունեցած մեր հնարավորությունները գեռես բավականաչափ չեն ոգտագործված։ Միայն վերջին ժամանակներս են տեղական կազմակերպությունները սկսել ավելի մեծ ուշադրություն դարձնել թեթեվ արդյունաբերու-

թյան ձեռնարկներին։ Միայն վերջին շաբաթներս են սկսել վոչ միայն թեթեվ արդյունաբերության ձեռնարկներում, այլև ծանր արդյունաբերության ձեռնարկներում կազմակերպել ուտիլ ցեխեր, վորոնց խնդիրն ե՝ ոգտագործել գործարանային զանազան տեսակի մնացորդները լայն գործածության առարկաների արտադրությունը մեծացնելու համար։

Միանգամայն անբավարար կերպով են ոգտագործել մանր կուստարային արդյունաբերության հնարավորությունները, վոր կարող եր բավականաչափ լրացուցիչ արտադրանք տալ լայն շուկայի համար։ Այժմ այդ գործին պետք ե ձեռնարկել բոլցերկյան ամբողջ հաստատակամությամբ։

Վերջին շրջանում, անկասկած, մեծանում ե քաղաքի, մանավանդ գյուղի սպառողին մատկարարելու լայն շուկան գնացող ապրանքների քանակությունը։ Անհրաժեշտ ե, վոր այդ արդյունապրանքները լիովին գյուղ հասնեն, ինչպես դա սահմանված ե կենտրոնական որգանների վորոշումներում։ Դրա համար ուժեղ վերահսկողություն ե անհրաժեշտ՝ ապրանքները դեպի տեղերը շարժելու, արդյունապրանքները դեպի գյուղ շարժելու վերաբերմակը պետական և կոռպերատիվ համապատասխան մատակարարողական կազմակերպությունների աշխատանքի ստուգումն՝ այժմ կուսակցական կազմակերպությունների մարտական խնդիրներից մեջն ե հանդիսանում։

Մենք դեռևս քիչ բան ենք արել գյուղին արդյունապրանքներ մատակարարելու գործը լրջորեն բարելավելու համար։ Սակայն կուսակցության և խորհրդային իշխանության կողմից այժմ կիրառվող միջոցառումները վկայում են, վոր մենք մեծ հնարավորություններ ունենք այդ գործում և այժմ

գյուղ ուղղված արդյունապրանքների ուժեղ հոսանքը  
պետք է իր գործը կատարի: Չի կարելի չընդունել,  
վոր այդ հանգամանքը մեծ նշանակություն ունի  
գյուղում տարվող մեր ամբողջ աշխատանքի համար,  
գյուղական տնտեսության վերելքի և կոլխոզների  
ամրապնդման համար:

Մանրամասն կանգ չեմ առնի վերջին տարիները Ուկրայնայի գյուղական տնտեսության մեջնատակայալին բազայի հսկայական աճման վրա: Բավական ե հիշել, վոր Ուկրայնայում ամբողջ ցանքային տարածության 45 տոկոսն արդեն սպասարկվում ե մեքենա-տրակտորային կայանների կողմից: Այս տարի վոչ միայն տրակտորներն, այլև կոմբայները, ավտոմոբիլներն արդեն հազարներով են գործելու դաշտերում: Գյուղական տնտեսության մեքենացրած բազայի հետագա ամեն կերպ զարգացման հետ միասին անհրաժեշտ ե վճռական պայքար մղել գյուղատնտեսության մեջ կենդանի քաշող ուժը կըրճատելու դեմ: Անհրաժեշտ ե գործով ապահովել կուսակցության և խորհրդային իշխանության՝ ձիուն խնամու վերաբերմունք ցույց տալու մասին կայացրած վորոշումների իրագործումը. դրա հետ միասին պետք ե շարունակել համառ պայքարը գյուղական տնտեսության մեքենայացրած բազան ամրապնդելու համար, անշեղ ծավալելով գյուղական տնտեսությանը տրակտորներ, կոմբայններ, ավտոմոբիլներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելը:

Մեր աճող սոցիալիստական արդյունաբերությունն որեցոր ամրապնդում ե քաղաքի ու գյուղի արտադրական մերձեցումը: Դրանով հիմք ե ստանում գյուղական տնտեսության տեխնիկական վերազինման և հետագա վերելքի համար, առանց վորի չի

կարելի ապահովել հենց ինդուստրիայի հետագա վերելքը: Գյուղին ուժեղացրած կերպով արդյունապրանքներ մատակարարելու հիման վրա մենք պետք ե նաև ապահովենք քաղաքի ու գյուղի առևտրական մերձեցման հետագա ամրապնդումը, վորն ունի կարելի վորագույն նշանակություն գյուղական տնտեսության վերելքի գործի համար և դրա հետ միասին հենց սոցիալիստական ինդուստրիայի ծավալման համար:

Վերջապես կոլխոզների ղեկավար կաղըերի յեվ կոլխոզային ակտիվի մասին:

Վերջին տարիներս մեր կոլխոզներում աճել են գյուղի սոցիալիստական տնտեսության հարյուր հազարավոր ամենակտիվ կառուցողներ: Կուսակցության վորոշումների համապատասխան, անհրաժեշտ ե ամրացնել այդ կազմերին կոլխոզների աշխատանքում և անհրաժեշտ ե նրանց ամենայն աջակցությունուց տալ՝ աշխատանքի մեջ և իրենց կուլտուր քաղաքական զարգացումը բարձրացնելու գործում: Ընդումին, անհրաժեշտ ե շեշտել, վոր կոլխոզային ակտիվի մեջ մեր աշխատանքը դեռ շատ թույլ ե ծավալված, այն ինչ կոլխոզային ակտիվի մեջ տարած աշխատանքը վճռական նշանակություն ունի կոլխոզների ամրապնդման և պետական ու կոլխոզային հիմնական առաջարրությունները նրանց կողմից կատարելու գործում:

Ուկրայնայում շրջաններ կազմակերպելու հետ կապված կուսկազմակերպությունների ուշադրության թուլացման վտանգ կա ույսներում տարփող աշխատանքի վերաբերմաբ: Այստեղ հանգեսյեկած մի շարք ընկերներ մատնանշեցին, թե այդպիսի տեսնդենցներ կան մի քանի շրջաններում. յեվ

գյուղ ուղղված արդյունապրանքների ուժեղ հոսանքը  
պետք է իր գործը կատարի: Չի կարելի չընդունել,  
վոր այդ հանգամանքը մեծ նշանակություն ունի  
գյուղում տարվող մեր ամբողջ աշխատանքի համար,  
գյուղական տնտեսության վերելքի և կոլխոզների  
ամրապնդման համար:

Մանրամասն կանգ չեմ առնի վերջին տարինե-  
րը Ուկրայնայի գյուղական տնտեսության մենենա-  
տրակտուային բազայի հսկայական աճման վրա: Բա-  
վական ե հիշել, վոր Ուկրայնայում ամբողջ ցանք-  
սային տարածության 45 տոկոսն արդեն պատարկ-  
վում ե մեքենա-տրակտորային կայանների կողմից:  
Այս տարի վոչ միայն տրակտորներն, այլև կոմբայ-  
ները, ավտոմոբիլներն արդեն հազարներով են գոր-  
ծելու դաշտերում: Գյուղական տնտեսության մեքե-  
նացրած բազայի հետագա ամեն կերպ զարգացման  
հետ միասին անհրաժեշտ ե վճռական պայքար մղել  
գյուղատնտեսության մեջ կենդանի քաշող ուժը կըր-  
ճատելու դեմ: Անհրաժեշտ ե գործով պատհովել կու-  
սակցության և խորհրդային իշխանության՝ ձիուն  
խնամու վերաբերմունք ցույց տալու մասին կայա-  
ցրած վորոշումների իրագործումը. դրա հետ միասին  
պետք ե շարունակել համառ պայքարը գյուղական  
տնտեսության մեքենայացրած բազան ամրապնդելու  
համար, անշեղ ծավալելով գյուղական տնտեսու-  
թյանը տրակտորներ, կոմբայններ, ավտոմոբիլներ և  
այլ գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելը:

Մեր աճող սոցիալիստական արդյունաբերությունն  
որեցոր ամրապնդում ե քաղաքի ու գյուղի ար-  
տադրական մերձեցումը: Դրանով հիմք է ստանում  
գյուղական տնտեսության տեխնիկական վերազին-  
ման և հետագա վերելքի համար, առանց վորի չի-

կարելի ապահովել հենց ինդուստրիայի հետագա վե-  
րելքը: Գյուղին ուժեղացը կերպով արգյունապ-  
րանքներ մատակարարելու հիման վրա մենք պետք  
ե նաև ապահովենք քաղաքի ու գյուղի առևտրական  
մերձեցման հետագա ամրապնդումը, վորն ունի կա-  
րեվորագույն նշանակություն գյուղական տնտեսու-  
թյան վերելքի գործի համար և դրա հետ միասին  
հենց սոցիալիստական ինդուստրիայի ծավալման հա-  
մար:

Վերջապես կոլխոզների դեկավար կադրերի յեվ  
կոլխոզային ակտիվի մասին:

Վերջին տարիներս մեր կոլխոզներում աճել են  
գյուղի սոցիալիստական տնտեսության հարյուր հա-  
զարավոր ամենակտիվ կառուցողներ: Կուսակցության  
վորոշումների համապատասխան, անհրաժեշտ ե ամ-  
բացնել այդ կադրերին կոլխոզների աշխատանքում  
և անհրաժեշտ ե նրանց ամենայն աշակցությու-  
ցույց տալ՝ աշխատանքի մեջ և իրենց կուլտուր-քա-  
զաքական զարգացումը բարձրացնելու գործում: Ընդ-  
ոմին, անհրաժեշտ ե շեշտել, վոր կոլխոզային ակ-  
տիվի մեջ մեր աշխատանքը գեռ շատ թույլ ե ծա-  
վալված, այն ինչ կոլխոզային ակտիվի մեջ տարած  
աշխատանքը վճռական նշանակություն ունի կոլխոզ-  
ների ամրապնդման և պետական ու կոլխոզային հիմ-  
նական առաջարությունները նրանց կողմից կատա-  
րելու գործում:

Ուկրայնայում շրջաններ կազմակերպելու հետ  
կապված կուսկազմակերպությունների ուշադրու-  
թյան թուլացման վտանգ կա ուայուններում տար-  
փող աշխատանքի վերաբերմամբ: Այստեղ հանդես  
յեկած մի շարք ընկերներ մատնանշեցին, թե այդ-  
պիսի տենդենցներ կան մի քանի շրջաններում. յեվ

նրանք արդարացի են: Պետք ե այդպիսի փորձերին վճռական հականարդված տար

Գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում մեր հիմնական հենարանը հանդիսացող ռայոնական կազմակերպությունների ամբապնդումը մեր բոլոր որդանների ուշադրության կենտրոնում պիտի լինի: Այդ մասին պետք ե հիշեն վերջին ժամանակաշրջանում Ուկրայնայում կազմակերպված շրջանային կազմակերպությունները:

\* \* \*

Յեվ այսպես, Ուկրայնայի բոլշևիկյան կազմակերպության առաջ դրված են կարեվորագույն խընդիրներ գյուղական տնտեսության բնագավառում: Ուկրայնայի բոլշևիկները կարողանան լուծել գյուղական տնտեսության վերելքի նոր խնդիրները կուղողային և սովորողային շնչարարության հիմնա վրա, վերակառուցելով իրենց աշխատանքը համապատասխան նոր պայմանների, համապատասխան յուրաքանչյուր ռայոնի, յուրաքանչյուր կոլխոզին կոնկրետ, պրակտիկ մոտեցման խընդիրներին:

Կոլխոզներն ու սովորողները դարձել են վճռական ուժ գյուղական տնտեսությունում, սակայն այդ գործին իրոք տիրապետելու մեր աշխատանքը գեռ սաստիկ հետ ե մնում գյուղի սոցշինարարության թուփից: Սակայն բոլշևիկներն ընդգծելով իրենց աշխատանքի մեջ թերությունների ու սխալների գոյությունը՝ այդ բանն անում են վոչ թե նրա համար, վորպեսզի իջեցնեն սոցշինարարության տեսպիրը, այլ նրա համար, վորպեսզի մոբիլացիայի յենթարկեն կուսակցական կաղըրերին ու աշխատավոր մաս-

սաներին՝ պայքարելու այդ թերությունների գեմ, դրանց վերացնելու համար: Մենք պետք ե բոլշեվիկորեն կենտրոնացնենք մեր ուժերն՝ բերքահավաքի կամպանիան տանելու, կորուստների գեմ կովելու, հացահատիկային և տեխնիկական մշակույթների բերքատվությունը բարձրացնելու, մշակույթների քաղանն ուժեղացնելու և բարելավելու, անամնաբուծությունը բարձրացնելու, կոլխոզային տնտեսությունում հաշվեառը դնելու, կոլխոզնիկների աշխատանքի կազմակերպման վրա և այն ժամանակ մենք պատվով կկատարենք գյուղական տնտեսությանը տրված հիմնական առաջադրությունները և կոլխոզների ամրապնդման խնդիրը:

Խորհրդային Միության գյուղական տնտեսության մեջ Ուկրայնայի նշանակությունը բացառիկ կերպով մեծ ե: Ուկրայնայի գյուղական տնտեսության վերելքի և ամենից առաջ կոլխոզների և սուխոզների տնտեսության վերելքի գործն ունի վոչ միայն ահազին տնտեսական, այլ և քաղաքական մեծ նշանակություն: Ուկրայնայի բոլշևիկների խնդիրը կայանում ե նրանում, վոր ապահովի ամբողջ կուսկազմակերպության ուշադրության շրջադարձ դեպի գյուղական տնտեսության վերելքի գործը, դեպի կոլխոզների և սովորողների ամրապնդման խնդիրները:

Յերկրի ներսում գտնվող գասակարգային թշնամիները (կուլակը, սպեկուլյանտը և հականեղափոխական վնասարարը) փորձում են և կփորձեն ողտագործել անցյալ շրջանում գյուղում տարած մեր աշխատանքի, թերությունները կոլխոզները քայլացիայելու, կոլխոզնիկների անկայուն մասի շարքերում կազմակուծում առաջ բերելու համար: Խորհրդային Միու-

թյան սահմաններից դուրս գտնվող դասակարգային թշնամին իր հաշիվներն այն բանի վրա ե կառուցում, վոր ոգտագործի մեր աշխատանքի մեջ յեղած թերություններն ու սխալներն իր նպատակների համար և, ամենից առաջ, արագացնելու Խորհրդային Միության դեմ իմ պերիալիստական ինտերվենցիան։ Պետք ե հիշել այն մասին, վոր այդ փորձերը վերջին ժամանակներս ուժեղացել են։

Այդ բոլորը պահանջում ե Ուկրայնայի բոլցիկներից վճռականորեն բարելավել աշխատանքը գյուղում և, ամենից առաջ, կոլխոզային շինարարության ղեկավարության վերաբերմամբ։ Ուկրայնայի կուսակցական կազմակերպությունը շատ անգամ ե ապացուցել, վոր ինքն ընդունակ ե բոլցիկորեն լուծել իր առաջ դրված դժվարագույն խնդիրները։ Մենք լիովին հավատացած ենք, վոր գյուղական արնատեսության վերելքի նոր խնդիրները լուծելու մեջ ել Ուկրայնայի կուսակազմակերպությունը ցույց կտա իր բոլցիկյան մարտունակությունը, դրա համար գործնական պլան մշակելով, նրա կատարման համար մորիլիզացիայի յենթարկելով իր կուսակմակերպությունները և աշխատավորների լայն մասսաները։

Մեր դիրքերը գյուղական անտեսության մեջ յերբեք այնքան ուժեղ չեն յեղել, վորքան այժմ, յերբ այստեղ կոլխոզներն ու սովխոզները վճռական տեղ են բռնել։ Դրանով վերջնականապես ջախջախված են բոլոր գույնի հականեղափոխականների, մենշևիկների, եսերների, տրոցկիստների և աջ-ուկոնիստների հաշիվները, թե Խորհ. Միության գյուղական անտեսությունում սոցիալիզմի հաղթանակը հնարավոր չէ։ Ավելի ևս մեծ վճռականությամբ մենք պետք ե հականարկած տանք բոլոր և ամեն տեսակի

վայնասուն բարձրացողներէն ու անձնատուր լինողներին, վորոնք ընդունակ չեն իսկական պայքար մղելու գյուղական տնտեսության վերելքի ու սոցիալիստական վերակառուցման համար, ընդունակ չեն բոլշևիկորեն կովել սոցիալիզմի հաղթանակի համար։ Ուկրայնայի բոլցիկները պիտի վերակառուցեն իրենց աշխատանքը նոր պայմանների և գյուղական տնտեսության վերելքի նոր խնդիրների համապատասխան։ Իրենց հաղթանակին հաստատ համոզված՝ Ուկրայնայի բոլցիկները պատվով կկատարեն գյուղական անտեսության վերելքի գործը, կլուծեն իրենց առաջ դրված գյուղատնտեսական խնդիրները և կորխողների ամրապնդման ու սովխոզների ծավալման խնդիրը։ Այդ խնդիրները լուծելու համար բոլցիկորեն մորիլիզացիայի յենթարկել Ուկրայնայի կուսակազմակերպությունը — դրա մեջ ե կայանում ներկա համառուկրայնական կուսակցական կոնֆերանսի գլուխավոր անելիքը (բուռն ծափանարդություններ)։

Դեռ վոչ այնքան հետու ժամանակներում, կուսակցության 16-րդ համագումարի ժամանակ՝ կոլեկտիվացրված երեղել զյուղացիական տնտեսությունների 21%-ը, իսկ ամբողջ սոցիալիստական սեկտորը, սովորապես հետ միասին՝ Խորհրդային Միության առաջնային տարածության միայն 32,4%-ն եր բըցանքային տարածությունը՝ ամբողջ ցանքային տարածություննում։ Այսոր արդեն կոլեկտիվացրած տնտեսությունները 61% են կազմում, իսկ սոցիալիստական սեկտորի գարնանացանի տարածությունը՝ ամբողջ ցանքային տարածության 80,4%-ին են հասնում։ Միմիայն ՄՏԿ-ները 35 միլիոն հեկտարից ավելի են ցանել։

Յեթե կուսակցության 16-րդ համագումարին սոցիալիստական սեկտորն արդեն գերակշռող եր հանդիսանում է Խորհրդային Միության եկոնոմիկայում, ապա պայմանը մենք, ձեզ հետ միասին, կարող ենք վոչ միայն սոցիալիստական սեկտորի գերակշռությունը մատնանշել, այլև և այն, վոր «Խորհրդային Միությունը գերջնականապես հաստատվել ե սոցիալիստական նոր ուղու վրա», և վոր «Խորհրդային Միությունում սոցիալիզմի գերջնական հաղթանակն արդեն ավարտված կարելի ե համարել»։

Դա վերջին տարվա պայքարի վճռական արդյունքներն են, մեր կուսակցության աշխատանքի վճռական արդյունքը (ծափանարության ներեմ)։

Բավականաշատ ավելացել ե գյուղական տնտեսության մեքենայացումը։ Յեթե առ 1-ն հունվարի 1929 թվի Խորհրդային Միության գյուղական անտեսությունում աշխատում եր 29,000 արակտոր և 1,8 սությունում աշխատում արակտոր և 1,8 հազար ավտոմոբիլ և վոչ մի կոմբայն չի յեղել, ապա հազար ավտոմոբիլ և վոչ մի կոմբայն չի յեղել, ապա 1-ն հունվարի 1932 թվի, աշխատում ե 146 առ 1-ն հունվարի 1932 թվի, աշխատում ե 146 հազար արակտոր (3 ու կես տարում զրեթե 5 անհազար արակտոր (3 ու կես տարում զրեթե 5 անհազար արակտորի (աճումը 5 ան-

# ՈՒԿՐԱՅՆԱՅԻ ԲՈԼՇԵՎԻԿԻՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

## ԸՆԿ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ ՃԱՌԸ

ԱՐՏԱՍԱՆԱԾ ՈՒԿՐԱՅՆԱՅԻ ԿՈՄԿՈՒՍԻ (Բ) 3-ՐԴ ՀԱՄԱՌԻԿՐԱՅՆԱՅԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ  
1932 թ. ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ

### 1. ԱՅՈՒՄ ՅԵՎ ԱՄՐԱՊՐՈՒՄ Ե ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՏԻՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընկերներ, ընկ. Ստալինի վերջին ցուցմունքներով՝ գյուղական տնտեսության և գյուղում տարբողաշխատանքի ղեկավարումը բարելավելու խնդիրը դըրված ե վորպես կարեռագույն խնդիր ամբողջ կուսակցության, և մանավանդ Ուկրայնայի կուսակազմակերպության համար։

